ՀԼԿՅԵՄ ՅԵՐՔԱՂԿՈՄ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ՅԵՐԵՎԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԼԿՅԵՄ ՍՏՈՐԻՆ ՈՂԱԿՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1933 Թ. ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր № 2038, Գլավլիտ 879, Տիրաժ 500

08 FEB 2018

# Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. ՀԱՄ · ԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշման հիման վրա, ուսումնական հիմնարկների ԼԿՅԵՄ կոմիտեների ու բջիջների բյուրոների վերընտրությունը Յերևանի քաղաքային կազմակերպության մեջ սկսել հոկտեմբերի 5-ից:

2. Առաջարկել ՀԼԿՅԵՄ քաղկոմին Համ. ԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշման ու նամակի հիման վրա կազմել վերընտրության որացուցային պլանն ու ներկայացնել ՀԿ(բ)Կ Յերկոմի քարտուղարության առաջիկա նիստին ի հաստատություն:

3. Բոլոր ուսումնական կուսկազմակերպություններին առաջարկել լայն օգնություն ցույց տալ կոմյերիտական բջիջներին այդ կարևոր կամպանիան անցկացնելու համար:

4. ՀԿ(բ)Կ Յերկոմի Կազմբաժնին՝ հոկտեմբերի 9-ին հրավիրել ուսումնական հիմնարկների կուսբջիջների քարտուղարների խորհրդակցություն այս խնդրի շուրջը:

5. Առաջարկել «Բանվորական Յերևանի» խմբագրությանը լայն լուսաբանել ինչպես նախապատրաստական, այնպես և հաշվետու կամպանիայի ու վերընտրությունների ընթացքը:

ՀԿ(բ)Կ Յերկոմի քարտուղար՝
Լ. ԲԱՐՄԵՂՅԱՆ

# ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Յելնելով ՀԱՄԼԿՅԵՄ Կենտկոմի վորոշումից՝ ուսումնական հաստատությունների կոմյերիտական ստորին ողակների վերընտրության համար ժամկետ սահմանել հոկտեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 5-ը: Այդ ժամանակաշրջանը բաժանել 3 մասի՝

ա) Նախապատրաստական— հոկտեմբերի 5-ից 10

բ) Հաշվետու— հոկտեմբերի 10–25

գ) Վերընտրական— հոկտեմբերի 25-նոյեմբերի 5-ը:

Առաջարկել բոլոր քաղկոմ-շրջկոմներին 2 որվա ընթացքում կազմել գործնական աշխատանքների պլան վերընտրությունները հաջող անցկացնելու և ուսումնական հաստատությունների կոմյերիտական հետագա աշխատանքների վորակը բարձր աստիճանի հասցնելու համար:

2. Հանձնարարել Կազմ, Կրթության և Կադրերի բաժիններին գրելու մանրամասն հրահանգ—նամակ բյուրոների հաշվետու վերընտրական կամպանիայի անցկացման և նորընտիր բյուրոների հետագա աշխատանքների մասին:

3. Հանձնարարել «Ավանգարդ»-ին սիստեմատիկ լուսաբանել նախապատրաստական և վերընտրական կամպանիայի ընթացքը, ոգնե-



ԱՌԳԵՏՐՆ
ՀԱՄԱՐ
1-3846գր

լով տեղերում գործի հաջող կազմակերպմանը:

4. Առաջիկա բյուրոյի նիստում լսել Յերևանի և Լենինականի Քաղկոմների Կազմ բաժինների, Կրթության և Կադրերի բաժինների զեկուցումները բյուրոների վերընտրության աշխատանքների մասին: Լսել նաև Զոովետինստիտուտի, Պետ. Համալսարանի, Կենտ. Ֆաբրգործուսի, Լենինականի Յերկաթ գծի ֆաբրգործուսի, Ինդուստրիալ բանֆակի ԼԿՅԵՄ կոլ բյուրոների զեկուցումները՝ բյուրոների վերընտրական կամպանիայի ընթացքի մասին:

ՀԼԿՅԵՄ Կենտկոմի քարտուղար՝

Վ. ԱՎԱԳՅԱՆ

□□□

# ՀԼԿՅԵՄ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

1. Յելնելով Համ. ԼԿՅԵՄ և ՀԼԿՅԵՄ կենտկոմների վորոշումներից հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 5-ը քաղաքի ուսումնական ցանցում անցկացնել բյուրոների վերընտրական կամպանիա:

2. Բյուրոների հաշվետու վերընտրական կամպանիան պետք է ընթանա առաջին հնգամյակի ձեռք բերված նվաճումների ամրացման, 2-րդ 5-ամյակի առաջադրված խնդիրների կատարմամբ, Համկոմկուսի Կենտկոմի սեպտեմբերի 5-ի, ոգոստոսի 25-ի և վերջին վորոշման լրիվ կենսագործման նշանաբանի տակ ամեն մի կոմյերիտականի իրոք դարձնելով ուսումնական վորակի, կարգապահության բարձրացման համար առաջավոր պայքարող:

3. Վերընտրական կամպանիան բաժանել յերեք շրջանի՝ 1-13 նախապատրաստական, 14-ից 23-ը հաշվետու և 24-ից նոյեմբերի 5-ը վերընտրական:

4. Վերընտրական կամպանիան պետք է անցնի ինքնաքննադատության նշանաբանի տակ, ի հայտ բերելով մեր աշխատանքների բոլոր բնագավառներում յեղած թերությունները



այն հաշվով, վոր վերընտրական կամպանիան խթան հանդիսանա կոմսոմոլի աշխատանքների բովանդակության բարձրացմանը, ուսումնական կազմակերպություններին դարձնելով ուսումնական պլանների կատարման համար մղվող պայքարի կազմակերպիչներ:

5. Բոլոր բջիջներում ընտրել բջիջների գործերը տանող հանձնաժողովներ, ուսման պլանի համար պայքարող կոմյերիտականներից, ստուգելու բջիջների աշխատանքները ու կազմելու նորընտիր բյուրոների նակազները:

6. Կազմբաժնին— նախապատրաստական, հաշվետու և վերընտրական կամպանիայի աշխատանքների ընթացքն ստուգելու համար հրավիրել բջիջի քարտուղարների խորհրդակցություններ:

7. Կուլտ-պրոպին— վերընտրական կամպանիայի կապակցությամբ լույս ընծայել մինչև հոկտեմբերի 20-ը հատուկ մեկ որյա բազմատիրաժ թերթ, իսկ բոլոր բջիջներում գործի գցել տեղական պատի թերթերը:

8. Խնդրել Կուս քաղկոմին հրահանգելու ուսումնական ցանցի կուսբջիջներին, կուսակցական ղեկավարությունն ու ոժանդակությունը ապահովելու վերընտրական կամպանիային:

9. Նոր ընտրվելիք բյուրոներում պետք է ընտրվեն քաղաքականապես կայուն, պայքարում փորձված, ուսումնա-արտադրական պլանների համար պայքարող, ուսումնական շրջանում հեղինակություն վայելող կոմյերիտականներ, ապահովելով կուսակցական ու սոցիալական կազմը:

10. Բոլոր բջիջներին— *Ամսի 6-ին հրավիրել արտակարգ բյուրոների նիստեր, քննության յենթարկել բյուրոների վերընտրական խնդիրները:*

11. Կազմբաժնին— *Մեկ օր ժամկետում կցել բոլոր ուսումնական բջիջներին մինչև բյուրոների վերընտրական կամպանիայի վերջը քաղ. ակտիվից մեկական հոգի:*

12. Կազմ. բաժնին—*Յերկու օրվա ընթացքում կազմել վերընտրական կամպանիայի օրացուցային պլանը:*

13. Կազմ. բաժնին— *Վերընտրական վողջ աշխատանքներին մասնակից դարձնել արտամիութենական յերիտասարդությանը և դասախոսական կազմին:*

14. *Հանձնարարել «Ավանգարդ»-ին սիստեմատիկաբար լուսաբանելու բյուրոների վերընտրական կամպանիայի ընթացքը:*

*ՀԼԿՅԵՄ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝*
**ԽԱՉԱՏՐՅԱՆ**

8 *հոկտեմբերի*, 1933 *թ.*

□□□



# ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԲՈԼՈՐ ԲՋԻՋՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ

— ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ!

*Համ. ԼԿՅԵՄ, ՀԼԿՅԵՄ կենտկոմների և ՀԼԿՅԵՄ Յերքաղկոմի վորոշմամբ, քաղաքի բոլոր ուսումնական ցանցում հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը անց է կացվելու բյուրոների վերընտրություն:*

*Այս տարի բյուրոների վերընտրությունն ուսումնական ցանցում զուգադիպում է այն պատմական վորոշումների կիրառմանը, վոր ունեցավ Համկոմկուսը և Կենտգործկոմը ԲՈՒՀ-երի, ԲՏՈՒՀ-ների, Տեխնիկումների և մասսայական դպրոցների մասին: Մեր ուսումնական ցանցի կոմյերիտական կազմակերպությունը կարողացավ այդ վորոշումները դարձնել ուսումնական ցանցի պլանների կատարման, ուսման վորակի բարձրացման, ուսման տեխնիկայի տիրապետման, գիտահետազոտական աշխատանքների հիմնական լծակը և վողջ կոմյերիտական, արտամիութենական ու դասախոսական կազմը մոբիլիզացիայի յենթարկել այդ ուղղությամբ (Պոլիտեխնիկ, Զոովետինստիտուտներ, Լենինային, Նըմեխ, Մանկ. տեխնիկումներ և այլն): Տեղական բջիջները վոչ միայն պայքար կազմակերպեցին ուսումնական պլանների կատարման համար, այլ դարձան նախաձեռնողներն ու կազմակերպիչները դպրոցաշինարարական, ինքնագործունեությունների, ուսանողական մատակարարման*

բարելավման, վերցնելով առանձին կաֆեդրաների, ամբիոնների, ֆակուլտետների, լաբորատորիաների, ճաշարանների, հանրակացարանների շեֆությունները, կազմակերպելով իրական աշխատանք այդ ուղղությամբ: Առանձնապես 33/34 ուս. տարվա նախորյակին շոշափելի գործ կատարեցին տեղերում մեր բջիջները յեռանկյունիների հետ, վոչ միայն ոգնեցին շենքերի վերանորոգմանը, կոնտինգենտի լրացմանը, այլ իրական գործ կազմակերպեցին այդ ուղղությամբ, վոր կարճատև դասընթացքների շնորհիվ կարողացան ակադեմկայապես հետ մնացող ուսանողներին առաջ մղել (Գյուղ. և Պոլիտեխնիկ ինստիտուտներ):

Առանձնապես վերջին շրջանում խոշոր հաջողություն ունեցան մեր կազմակերպությունները ԲՈՒՀ-ում, դպրոցում միանձնյա ղեկավարության սկզբունքների կիրառման ասպարեզում:

Այս հաջողությունները Յերևանի ուսումնական ցանցի կոմյերիտական կազմակերպությունը կարողացավ ձեռք բերել կոմսոմոլի Քաղկոմի և տեղական կուսակցական կազմակերպությունների կենդանի, ոպերատիվ ղեկավարությամբ, անհաշտ պայքար մղելով յերկու ֆրոնտում մեր աշխատանքների բոլոր բնագավառներում, վոտքի հանելով տեղական կազմակերպությունների բոլոր գույնի հակակուսակցական տրամադրությունների, վայնասունների, ուսման աշխատանքները լքողների ու քայքայողների դեմ (Գյուղ. ինստիտուտ, Մելիորատիվ տեխնիկում), զինելով մեր յերիտասարդությանը Մարքսի, Լենինի, Ստալինի հեղափոխական տեսությամբ և պրակտիկայով:

Քաղաքային կոմիտեն բյուրոների վերընտրություններին տալով խոշոր քաղաքական նշանակություն, վորը ուսումնական ցանցի կոմյերիտական



կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում վերընտրական կամպանիան անցկացնել այնպես, վոր յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա ուսումնա-արտադրական պլանների կատարման, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, մեր յերկրին վորակյալ մասնագետների տրամադրման, միանձնյա սկզբունքների ուժեղացման սոցիալիստական աշխատանքի ձևերի կիրառման, Մարքսի, Լենինի, Ստալինի հեղափոխական ուսմունքի տիրապետման կազմակերպիչներն ու նախաձեռնողները լինեն:

Բյուրոների վերընտրությունը պետք է անցնի լայն ինքնաքննադատության նշանաբանի տակ, ասպարեզ հանելու այն բացերն ու թերությունները, վոր կան մեր վողջ աշխատանքներում, ԲՈՒՀ-երում, դպրոցում, խմբում, ճաշարանում, հանրակացարանում, ակումբում և այլն, և ցույց տալ այն միջոցառումները, վոր հնարավոր լինի արմատապես վոտքի հանելու մեր աշխատանքների հետամնաց ողակները, ստեղծելու գործնական ու համառ պայքար մեր առաջ դրված խնդիրների ժամանակին ու հաջող լուծմանը:

Բյուրոյի վորոշմամբ վերընտրական կամպանիան բաժանվում է յերեք շրջանի՝ հոկտեմբերի 1—13-ը առաջին շրջան, 14—23-ը յերկրորդ շրջան և 24-ից նոյեմբերի 5-ը յերրորդ շրջան:

## Առաջին շրջան.—

Հոկտեմբերի 1-ից մինչև 13-ը համարվում է նախապատրաստական շրջան. այս առթիվ պետք է գործի դնել տեղական մամուլը՝ ահազանգելու վերընտրական կամպանիայի խնդիրները և նախապատրաստական շըր

ջանի պատկերը: Այս առթիվ հոկտեմբերի 10-ին բոլոր բջիջները հրավիրում են դռնբաց լայն նիստեր. Նիստերին մասնակից պետք է դարձնել անկուս յերիտասարդությանն ու դասախոսական վողջ կազմին, Բաղկոմից ամրացված ընկերոջ հետ դնել հատուկ զեկուցում բյուրոների վերընտրության մասին, կապված ուսումնական ցանցի կոմյերիտական կազմակերպության հերթական խնդիրների հետ: Նույն նիստում պետք է ընտրել հատուկ բրիգադ, բրիգադն ստուգելու յե կոմսոմոլի բջիջի վողջ աշխատանքների բնագավառները՝ ակադեմիական, ուսումնա-շինարարական, սոցմրցման, քաղուսուցման, ուսանողական մատակարարման, կոմյերիտական ցեխային խմբակների ու սեկտորային աշխատանքները: Բրիգադն իր աշխատանքների բնագավառում մասնակից է դարձնում կոմյերիտական վողջ մասսային, հիմքից ուսումնասիրելու կոմսոմոլի աշխատանքների դրվածքը բոլոր բնագավառներում, այն հաշվով, վոր այդ ստուգումը ազդակ հանդիսանա բջիջի հետագա աշխատանքների աշխուժացմանը և վորի հիման վրա հնարավորություն լինի կազմելու նոր ընտրվելիք բյուրոների առաջադրանքները:

Նախապատրաստական վողջ աշխատանքների ընթացքում պետք է որվա խնդիրների շուրջը գրել հատուկ շարժ-պլակատներ, լոզունգներ, վորով հնարավոր լինի գործի գցելու տվյալ հիմնարկի վողջ հասարակայնությանը՝ հաջող անցկացնելու վերընտրական կամպանիան: Վերընտրական կամպանիան հենց սկըզբից պետք է նոր թափ ու յեռանդ ստեղծի սոցմրցման ու հարվածայնության մեջ, գործի գցելու գոյություն ունեցող գիտա-հետազոտական խմբակների աշխատանքները, իրական բեկում ստեղծելու քաղ. ուսուցման



ասպարիզում, թարմացնելու ամբիոնների, կաբինետների, լաբորատորիաների աշխատանքները, այն հաշվով, վոր ուսանողության և կոմյերիտական կազմակերպության վողջ ստեղծագործական աշխատանքը ի սպաս դնելու կոմյերիտական աշխատանքների հետագա պայքարը ավելի հիմքից մոտեցնելու ուսումնական աշխատանքներին:

## Յերկրորդ շրջան.—

Այս շրջանը համարվում է հաշվետու շրջան. ըստ քաղաքային կոմիտեյի պլանի պետք է սկսել բոլոր բըջիջներում հաշվետու կամպանիան, քաղկոմից ամրացվածի հետ բոլոր խմբերում լսվում է ցեխ. խմբակավարների (խմբային խմբակավարների), ցեխ. կազմակերպիչների զեկուցումները: Զեկուցումների շուրջը պետք է բացել մտքերի լայն փոխանակություն, պարզելու թե խմբում կոմսոմոլի ստորին կորիզը վորքանո՞վ է կարողացել խմբի վողջ կոմյերիտականներին, անկուս յերիտասարդներին պայքարի հանել ուսումնա-արտադրական պլանների կատարման գործին, ի հայտ բերելով խմբի վողջ դրական ու բացասական աշխատանքները, այն հաշվով, վոր խումբը հետագայում հանդիսանա իրական կորիզը կազմակերպելու այն պայքարը, վոր վերաբերվում է իր խմբին, տեղում կազմակերպելու սոցմրցումը, հարվածայնությունը, հետ մնացողներին բուքսիրի յենթարկելու, պայքարը սրելու կեղծ հարվածայինների, ուշացողների, լոդըրերի, որվա դասերը չպատրաստողների դեմ:

Խմբակավարների հաշվետվությունից հետո պետք է սկսել բջիջի բյուրոների հաշվետվությունները. բջիջների ընդհանուր նիստում զեկուցում է բջիջի քարտուղարը՝ բջիջի հաշվետու աշխատանքների մա-

սին. քարտուղարի զեկուցումից հետո հարակից զեկուցում է տալիս ստուգող բրիգադան, մանրամասն կերպով կանգ առնելով ամբողջ աշխատանքների առանձին բնագավառների, առանձին կազմակերպիչների, առանձին խմբակավարների աշխատանքների վրա, թե նրանք որքանո՞վ են կարողացել մեր առաջ դրված խնդիրների հիման վրա պայքար կազմակերպել, որից հետո բացվում է մտքերի լայն փոխանակություն, որտեղ մասնակից են դառնում խոսելու առանձին դասախոսների, պրոֆեսորների, մատակարարման գծով աշխատողների, ցեխային խմբակավարների, պարզելու թե կոմյերիտական կազմակերպությունը որքանո՞վ է կարողացել առանձին բնագավառների վրա ուշադրություն դարձնել:

Տվյալ ուսումնական վայրում եթե կան կոլբյուրոներ, ապա պլանի համաձայն լսվում է ամբողջ կոլեկտիվում կոլբյուրոյի քարտուղարի զեկուցումը մեկ տարվա աշխատանքների մասին, որից հետո նույնպես հանդես է գալիս հարակից զեկուցումով կոլբյուրոյի ստուգող բրիգադան, և այսպիսով հաշվետու նիստը վերջանում է:

## Երրորդ շրջան.—

Այս շրջանը համարվում է ընտրության շրջան, բոլոր բջիջներում հոկտեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 5-ը անց է կացվելու ցեխային խմբակավարների, բջիջի բյուրոների, և որտեղ կան կոլբյուրոներ, ընտրություններ, այդ առթիվ 10—15 օր առաջ դարձյալ փակցված են լինում հիմնարկի աչքի ընկնող տեղերից հատուկ արկղներ, որտեղ հավաքում են նոր ընտրվելիք բյուրոների համար առաջադրվելիք ցուցակները և համապատասխան առաջադրություններ բջիջների,



ցեխ. խմբակավարների, կոլբյուրոների աշխատանքների համար:

Նախօրոք ժողովների օրը, ժամը, շենքի մասին պատերին պետք է փակցնել մեծ հայտարարություններ, այն հաշվով, որ յուրաքանչյուր կոմյերիտական, անկուսակցական երիտասարդ և դասախոս իմանա նիստի տեղի, ժամի մասին:

Ընտրությունները պետք է անցնեն բացառապես լայն դեմոկրատիայի հիման վրա, ընտրություններին մասնակից դարձնելով բոլորին:

Ընտրություններն անցկացնել հետևյալ կերպ.— սկզբում անց է կացվում ցեխային խմբակավարների, ցեխային կազմակերպիչների ընտրություններ. մի քանի օրից հետո անց է կացվում բջիջների բյուրոների ընտրություն, իսկ եթե տվյալ ուսումնական ցանցում կարիք է զգացվում կոլբյուրո ընտրելու, ապա դարձյալ ըստ պլանի անց է կացվելու կոլբյուրոյի ընտրություն: Ժողովը սկսվում է, նախօրոք հավաքված ցուցակները միացվում է, կազմվում մեկ ընդհանուր ցուցակ, ապա սկսվում է ընտրությունը:

**Ո՞Վ ՊԵՏՔ Է ԸՆՏՐՎԻ ԲՅՈՒՐՈՆԵՐՈՒՄ.**—Ուսման առաջավոր, պայքարում փորձված, սոցիալապես հարազատ, քաղաքականապես վստահելի, հեղինակություն վայելող, ուսման աշխատանքներին ավելի մոտ կանգնած, ուսման գործը կազմակերպող ընկերներ, որոնք պետք է լինեն պլանների համար պայքարը կազմակերպողները: Ժողովում ընտրությունները անց կացնելուց հետո քննվում են նակազները, առաջադրվում կոնկրետ ու պրակտիկ խնդիրներ բջիջների, ցեխային խմբակների, կոլբյուրոյի հետագա աշխատանքների համար:

Ընտրությունները վերջանալուց հետո, տեղերում

ընտրված բյուրոները սկսում են անմիջապես աշխատանքի բաժանում կատարել, հիմք ունենալով Համկոմկուսի Կենտկոմի վերջին վորոշումը՝ հասարակական, քաղաքական աշխատանքների կարգավորման մասին, այն հաշվով, վոր յուրաքանչյուր կոմյերիտական ունենա մեկ պարտականություն: Բյուրոների վերընտրությունը պետք է նոր թափ ու յեռանդ մտցնի, ԲՈՒՀ-ում, ԲՏՈՒՀ-ում — Համամիութենական յերկրորդ մրցականչը հաջող կազմակերպելու, ուսման բնագավառում ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 պատմական ցուցմունքները լրիվ իրագործելու, մասսայական դըպրոցներում սեպտեմբերի 5-ի և օգոստոսի 25-ի պատմական վորոշումների կենսագործման տեսանկյունով բարձրացնելու դպրոցի գիտակցական դիսցիպլինան, իր բարձրության վրա դնելու կոմունիստական դաստիարակությունը և պոլիտեխնիկ դպրոցի պրինցիպները: Վերընտրությունները պետք է ապահովեն կենդանի գործնական ու կենդանի, ամենորյա պայքար կազմակերպելու, ուսումնա-արտադրական պլանների կատարման, ուսումնական վորակի բարձրացման, ուսընագավառում նոր թափ ու յեռանդ մտցնելու, բարձրացնելով դիսցիպլինան, գործի գցելով վողջ ուսանողության ստեղծագործական յեռանդը «ԲՈՒՀ-ը կռվով վերցնելու» (ԿՈՍԱՐԵՎ):

Ավելի բարձր ինտերնացիոնալիզմի դրոշը, ավելի բարձր Մարքսի—Լենինի—Ստալինի հեղափոխական ինտերնացիոնալիզմի վոգին:

ՀԼԿՅԵՄ Ցերճաղկոմի քարտուղար՝
Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմբաժվար՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

8 նոյեմբերի 1933 թ. Յերևան



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՍՏՈՐԻՆ ՈՂԱԿՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱԽՏԱԿ

| Բջիջի անունը | Ներկա ժողովների ընդհանուր թիվը | Ըստ կուսակցականության | | | Ըստ սեռի | | Դասախոսներից | Ըստ ազգության | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կոմունիստ | ԼԿՅԵՄ | Անկուս. | Արական | Իգական | | Հայ | Ռուս | Թուրք | Այլ ազգ. |
| Ըստ էության արտահայտվողներ | | | | | | | | | | | |

Սույն ձևից լրացնել 3 հատ. հաշվետու, նախապատրաստական և վերընտրական կամպանիայի մասին:

Պաշտոնի կողմից ամրացված է՝

Բջիջի քարտուղար՝

# Պ Լ Ա Ն
## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ

| Բջիջի անունը | Հաշվետու շրջան | | | Ընտրական շրջան | | | Ամրացվածի անուն ազգանունը | Վ ո ր բջիջից է |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ցեխ. ժող. | բջիջի | կուսժողով | ցեխ. ժող. | բջիջի | կուսժողով | | |
| Մանկ. ինստ. | 15 | 16 | 20 | 24 | 25 | 30 | Խաչատրյան Մ. | Քաղկոմ |
| Գյուղ. » | 16 | 17 | 18 | 25 | 20 | — | Կարապետյան Ս. | » |
| Պոլիտեխ. ինստ. | 17 | 18 | 21 | 5 | 30 | 2 | Ալեքսանյան Ս. | » |
| Բուժ. » | 18 | 19 | 22 | 24 | 27 | 3 | Խաչատրյան Մ. | » |
| Զոոտեխ. » | 19 | 20 | 23 | 5 | 28 | 1 | Ավագով | Կենտկոմ |
| Կոմ. համալսար. | 18 | 21 | 22 | 24 | 28 | 30 | Բարսեղյան Բ. | Քաղկոմ |
| Պետ. կոնսերվ. | 18 | 19 | — | 25 | 26 | — | Մալխասյան Մ. | Պոլիտեխն. ինս. |
| Գյուղ. բանֆ. | 16 | 18 | 21 | 24 | 28 | 2 | Մարտիրոսյան Խ. | Քաղկոմ |
| Ինդ. բանֆ. | 16 | 19 | — | 26 | 28 | — | Հարությունյան Հ. | Պոլիտ. ինս. |
| Մանկ. բանֆակ. | 16 | 18 | — | 28 | 20 | — | Բեկուլյան Ս. | » » |
| Մանկ. տեխն. | 19 | 22 | 23 | 24 | 26 | 28 | Արմո-Լարինց | «Սոց-գյուղ.» |
| Շին. » | 18 | 19 | 22 | 26 | 28 | 29 | Սայինյան Ա. | Պոլիտեխ. ինս. |
| Կոոպ. » | 18 | 19 | 22 | 24 | 26 | 30 | Աշոտ Ճուղուր | «Բ. Յեր» |
| Լեռն. » | 16 | 19 | 22 | 26 | 27 | 1 | Ղազարյան Հ. | Քաղկոմ |
| Արդ. » | 18 | 19 | 21 | 26 | 29 | — | Ազատ Բ. | Կաշվի գոր. |
| Թուրք. » | 19 | 22 | — | 26 | 27 | — | Հասանով Խաս. | Մանկ. բանֆ. |
| Մելյորատիվ տեխն. | 19 | 21 | — | 27 | 29 | — | Խնկոյան Խ. | Քաղկոմ |
| Ելմեխտեխ. | 16 | 17 | 21 | 24 | 28 | 30 | Նուշիկյան | Ժողկապ |
| Հողաշին. տեխն. | 16 | 19 | — | 28 | 29 | — | Ղուկասյան Զ. | Տպարան |
| Պողագործ. տեխ. | 18 | 20 | — | 28 | 29 | — | Բաբայան | Հայտնաբեկս |
| Անասնաբ. » | 19 | 21 | — | 26 | 27 | — | Գալստյան Գ. | Մեխ. գործ. |
| Քրդ. տեխն. » | 19 | 20 | — | 27 | 28 | — | Սարգսյան Ս. | «Պ. կանչ» |
| Ֆիզկուլտ տեխն. | 20 | 21 | — | 27 | 28 | — | Նալբանդյան Ն. | Ֆ. Քոլխոզն. |
| Ճն. տեխն. | 21 | 22 | — | 29 | 30 | — | Խաչիկյան Գ. | Տեղիս |
| Քիմ. տեխն. | 17 | 18 | 22 | 26 | 27 | 30 | Բաբայան Վ. | Պ. Կոլեկտոր. |
| Կերպարվեստ տեխն. | 19 | 20 | — | 26 | 29 | — | Թորոսյան Վ. | Հրուշակ |
| Բժ. տեխն. | 17 | 19 | — | 24 | 28 | — | Սեդրակյան | Լայարդշին |
| Կապի ելեկ. տեխն. | 19 | 0 | — | 6 | 29 | — | Մխիթարյան Տ. | Փայտ. մշ. գ. |
| Սովխոզուչ. | 17 | 20 | — | 29 | 30 | — | Ավետիսյան Տ. | Արարատ |
| Կենտ. ցուց. դպ. | 17 | 22 | — | 26 | 29 | — | Համազասպյան | Պ. Կենտր. |
| Շահումյան դպ. | 21 | 22 | — | 28 | 29 | — | Հովսեփյան | Գյուղ. բանֆ. |
| 7-ամ. № 2-րդ դպ. | 20 | 21 | — | 28 | 29 | — | Առաքելյան | Շին. տեխն. |
| Մաքսիմ Գորկի | 19 | 21 | — | 26 | 28 | — | Շահնազարյան Ս. | Քաղկոմ |
| Մասմյանի դպրոց | 18 | 20 | — | 26 | 27. | — | Բարսեղյան | Քիմ. տեխն. |
| Աբովյանի » | 18 | 19 | 21 | 26 | 28 | 30 | Խզմալյան Գ. | «Յերկոց» |
| Մյասնիկյանի » | 18 | 20 | — | 29 | 30 | — | Սոկրատ | Մեխ. գործ. |
| 7-ամ. № 7. » | 19 | 20 | — | 28 | 29 | — | Հակոբյան Հ. | Քաղկոմ |
| «26»-ի 7-ամ. » | 19 | 22 | — | 29 | 30 | — | Մարգարյան Վ. | Կոմ. համալս. |
| Կայար. 7-ամ. » | 16 | 20 | — | 26 | 29 | — | Դանիելյան Գ. | Քաղկոմ |
| Բանվ. 7-ամ. 1. » | 19 | 20 | — | 29 | 30 | — | Հարությունյանի. | » |
| » » 2. | 1 | 22 | — | 29 | 30 | — | Յերզնկյան Գ. | Լեռնային տեխն. |
| » » 3. | 20 | 21 | — | 29 | 30 | — | Հովհաննիսյան Հ. | Պ. Տեխ. ինստ. |
| » » 4. | 20 | 20 | — | 26 | 27 | — | Գզիրյան Գ. | » » |
| » » 5. | 18 | 20 | — | 26 | 27 | — | Մինասյան | Մանկ. բանֆ. |
| » » 6. | 20 | 23 | — | 24 | 29 | — | Դդիբենց | «Ավանդ» |
| » » 7. | 18 | 19 | — | 26 | 1 | — | Քոչարյան Մ. | Պ. ք. բ. |
| Մանկ. 4-ամ. դպ. | 16 | 19 | — | 26 | 27 | — | Ասատրյան Պ. | » » |
| Ֆին. տեխ. | 18 | 20 | — | 26 | 1 | — | Դանոյան Բ. | Պոլիտեխն. ինստ. |
| Կենտ. փեդեյու | 16 | 19 | — | 26 | 29 | — | Սահակյան Ն. | Քաղկոմ |

ՀԼԿՅԵՄ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ (Խաչատրյան)

# ՏԵՂԵԿԱՆՔ

........................................ ԼԿՅԵՄ բջիջի նորընտիր բյուրոյի կազմը

| №№ ըստ կարգի | ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ ՅԵՎ ՀԱՅՐԱՆՈՒՆ | Ազգությունը | Սեռ | Ծննդյան թիվը | ԼԿՅԵՄ մտել | Կուս. անդամ-թեկնածու. | Սոց. դրությունը | Հաճախում է դպրոց թե ոչ | Ներկա աշխա-տանքը | Քաղաքական գրագ. խմբակում է սովորում | Բջիջում ինչ աշխ. է տանում | Կրթությունը | Հաշվառման №-ը | ՏԱՆ ՀԱՍՑԵՆ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բջջի քարտուղարների անունները գրվում է ցուցակի առաջին տողում, բյուրոյի թեկնածուներին՝ վերջին տողում։ Հարցի պատասխանները գրել մաքուր և համառոտ ներկայացնել քաղկոմ։

Բջիջի քարտուղար՝

-30-

ՀՀ Ազգային գրադարան
NL0999298

1 9
1
3846